

ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ

Ստորև հրապարակվող նամակները, որոնց հեղինակների մեծագույն մասը հայ մշակույթի նշանավոր դեմքեր են (Ա. Թաճանյան, Ն. Շահազիզ, Ն. Թադևոսյան, Ն. Ակինյան, Լ. Մելիքսեթ-Իեկ), ուղղված են ականավոր հայագետ, բանասեր, արվեստի պատմաբան Գարեգին Հովսեփյանին (1867—1952)։ Նամակները, շոշափված հարցերի բազմազանությամբ, հետաքրքիր փաստերով, մեկ անգամ ևս վկայում են Գ. Հովսեփյանի ու նամակագիրների հետաքրքրությունների լայն շրջանակը և նոր կողմերով արժարժում Գ. Հովսեփյանի անխույզ ու բազմափաստակ գործունեության հետ կապված որոշ հարցերի հնդրո առարկա նամակները պահվում են ՀՍՍՀ Միևիտրների խորհրդին առնթվել Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) Գ. Հովսեփյանի արխիվային ֆոնդում։

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

1

1 մայիսի, 1932

Թավրիզ

Գերապատիվ հայր Գարեգին. էջմիածին.

Գերապատիվ սուրբազան հայր!

Շնորհակալությամբ կարդացի Ձեր նամակը, սակայն պատասխանը այսօրան ուշացրի՝ սպասելով հայր սուրբ Արիստակեսի մեկնելուն։

Իմ խորին շնորհակալություններս եմ հայտնում գիտական ինստիտուտի վարչության անդամներին ինձ նախագահ ընտրելու պատվին արժանացնելու համար, սակայն, ցավոք սրտի ստիպված եմ հրաժարվել։ Նախ՝ մայրենի լեզվին չտիրապետելու պատճառով, ինձ համար չափազանց դժվար կլինի մի այդպիսի գիտական աշխատանքի լծվել, և երկրորդ՝ այն գուտ տեխնիկական և շինարարական աշխատանքը, որ ես ծրագրել եմ Հայաստանում իրագործել կպահանջի ինձանից այնքան ուժ և ժամանակ, որ դրա հետ միաժամանակ անկարող եմ հանձն առնել նախագահի պատասխանատու կոչումը։

Սրբազան, հայր ներսեսը ինձ հանձնեց Ձեր ուղարկած գոտին և հայտնեց Ձեր խնդիրը։ Դժբախտաբար ես չկարողացա անիլ այդ փոքրիկ հանձնարարությունը։

Այստեղ արժաթը շատ չնչին է գնահատվում, և գոտուն տալիս են ամենաշատը 1—1½ թուման, մինչդեռ լուսանկարչական պիտույքները, ըստ Ձեր ցուցակի կարժենան մոտ 80 թուման. պատճառն այն է, որ Թավրիզում վաղուց ի վեր չեն ստացվում, իսկ հնուց մնացածը շատ թանկ է գնահատվում։ Այդ իսկ պատճառով ուղարկում եմ Ձեզ գոտին, քանի որ այդտեղ ավելի թանկ կարելի է ծախել և կարևոր պիտույքները գնել Տփլիսում, որտեղ գնել է և պրոֆ. Աշխարհբեկը²։ Հակառակ դեպքում դուք կարող եք վերցնել պ. Աշխարհբեկից, որ բավականաչափ գնել է իր համար, ես իմ կողմից արգեն գրել եմ նրան այդ մասին*։

* Այս նախադասությանը հաջորդում է նույն՝ կապույտ թանաքով գրված՝ «Գոտուն հետ մեկտեղ չմերժեք ընդունել ինձանից մի փոքրիկ նվեր» նախադասությունը, որ ջնջված է մանիշակագույն թանաքով։

ևս վաղուց է, որ ձգտում եմ վերադառնալ և աշխատել հայրենի հողի վրա՝ սակայն ընտանիքի հոգսը և պայմանները մինչև այժմ թույլ չեն տալիս ինձ իրագործելու իմ ցանկությունը:

Ընդունեցեք անկեղծ ողջույններս Ա. Թամանյան:

2

23 հուլիսի, 1925

Potsdam

Խորին սրբազանության

Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին

Ս. Էմիլաճնում

Սրբազան հայր!

Հուսամ, որ սույն սողերիս գրողը և Ձեր նախկին աշակերտը Ձերդ սրբազանության հիշողությունից միանգամայն անհետացած չի լինի:

Կոչված լինելով մեր անկույն բարեկամ զր. Լեպսիուսի՝ կողմանե իրեն մոտեն աշխատակցելու, նորանից հատուկ հանձնարարություն ունիմ Ձեզ սրբազանության ողջունելու և խնդրելու, որ այսուհետև Ձեր և զր. Լեպսիուսի հետ ըստ հնարավորության տևական կապ պահպանվի, մի հանգամանք, որին նա խոշոր կարևորություն է տալիս:

Թերևս Ձերդ սրբազանությունը լսած լինի, որ նա հակառակ իր առողջական թույլ վիճակին (66 տարեկան ծերունին վերջերս խիստ տառապում է շաքարախտից և ջղային ցավերից) իր բոլոր հոգսերն ու ջանքերը ներկայումս էլ հայ որբին և հայ ժողովրդին է նվիրել: Պատերազմը իր բոլոր հետևանքներով և նամանավանդ գերմանական դրամի անկումը միանգամայն քանդել էին նորստայն երեսնամյա գործը Արևելքի մեջ, որի պատճառով նա 1895 թ. թողել էր իր քահանայական պաշտոնը: Սակայն մարկի կայունություն ստանալուց հետո նա նոր թափով գործի վերականգնության անցավ և մի տարվա ընթացքում հաջող պրոպագանդի շնորհիվ կարողացավ արաբների ձեռքից իր նախկին աշխատակցուհու, դանիացի օր. Կարեն Եպպեի ձեռքով հայ մանցորդներ ապաստելու համար մոտ 300 հոգու համար փրկանք ձեռք բերել (մարդագլուխ 120 մարկ), բացի դորանից 150 հոգի որբի համար ծնողներ գտնել Գերմանիայում, սակայն պայմանավ, որ որբերը Արևելքում (առաջիմ Սիրիայում) պահվեն: Սոցա թիվը մինչև հոկտեմբեր կհասնի 400-ի՝ մարդագլուխ տարեկան 250 մ < արկ > խնամք է հաշվում, մի հանձնառություն, որ եթե Գերմանիո ներկա տնտեսական վիճակը աչքի առաջ ունենալու լինենք, չնչին բան չէ: Այս առթիվ հրատարակում է «Der Orient» ամսագիրը իմ մոտիկ աշխատակցությամբ, որը այսուհետև Դուք կանոնավոր կստանաք, եթե այդտեղից որևէ արգելք չլինի, իսկ այդ չի կարող լինել, որովհետև մենք ներկա կառավարության նկատմամբ էլ ոչ միայն չեզոք, այլ միանգամայն բարյացակամ դիրք ենք բռնել: Առհասարակ զր. Լեպսիուսը շատ ուրախ կլինի, որ եթե դուք գիտական-գրական կարիքներ ունիք՝ մեզ դիմեք, մենք ըստ հնարավորության կբավարարենք սիրով: Անկախ վերոհիշյալներից, զր. Լեպսիուս ձգտում է այստեղ մի հայ ուսուցչանոց հիմնել միանգամայն հայ ծրագրով և հետևում է մի երրորդ կարևոր նպատակի՝ «Հայ ժողովրդի նորագույն պատմությունը» խոշոր գիտական մի աշխատանք կազմելու համար և ահա այդ տեսակետից շատ կխնդրեք՝ որ նախ «Արարատ» ուղարկելիք եթե հնարավոր է, նմանապես հայ եկեղեցու բարեկարգության շուրջ առաջ եկած ամբողջ գրականությունը (մեջը նաև Աշոտ եպիսկ. գրվածքների նմանները հաշվելով):

Խոնարհարար խնդրելով ներփակ նամակը պ. Ռաֆայել Մելիք-Աղամյանին հասցնել (ղծբախտաբար հասցեն չգիտեմ), նախօրոք Ձերդ սրբազանության իմ ամենաանկեղծ երախտագիտությունս եմ հայտնում և օրհնությունն հայցում:

Ձեր նախկին աշակերտ՝ Մ. Քրիշչյան

2. Գ.—Սրբազան հայր՝ Դր. Լեպսիուսի հիմնած միսիոնի 30-ամյակն է կատարվելու այս սեպտեմբեր 25-ին։ Որքան հարմար ասի՞թ է այդ վեհափառ Հայրապետի կողմից պատշաճ ուշադրության արժանացնելու։ Չմոռանանք, որ պատահադամի ընթացքում միակ բյուրդերական անձն է եղել, որ կոտորածների առթիվ իր հրատարակություններով և հալածվելով հրահրել է գերման կառավարության և գերման ժողովրդի խիղճը։

Սրբազան, շատ շնորհակալ կլինեմք, եթե պ. Աղամյանին ուղղված հարցարանի 3 կետի՝ վեհափառից 3 անգամ ընդունվելու մասին բարի լինեիք հորեն սրբազանի կամ այլ իրազեկ անձի կարծիքն իմանալու։ Նմանապես շատ շնորհակալ կլինեի եթե այս՝ Ձեր նամակն էլ ուղարկեիք պ. Մ. Աղամյանին ի պիտություն։

ԲՊԹ. 96, վավ. 993

3

19 օգոստոսի, 1926

Athenes

Գերաշնորհ

Տ. Գաբելին Ս. Արևիկիսկ <ուպոս> Հովսեփյան

Ի Ս Էփիաթին

Գերաշնորհ սրբազան հայր.

Անձամբ ծանոթ չեմ Ձեզ, բայց Ձեր հայրենասեր գիտնականի համբավը թույլ կուտա ինձ դիմել Ձեզ և Ձեր աջակցության հետևյալ խնդրոյն համար։

Այստեղ, Հունաստանի մայրաքաղաքին մեջ, պետական բյուրոկրատիան ճարտարապետության բաժանմունքի տնօրեն և բազմաթիվ տղայան վարժարանի ուսուցիչ, պրոֆ. Մ. Բ. Օրլանտոս ձեռնարկած է պատրաստելու մեծ գործ մը բյուրոկրատիկան ճարտարապետության մասին։ Այդ գործին մեջ կարևոր տեղ մը պիտի ունենա հայկական ճարտարապետության բաժինը։ Մ. Բ. Օրլանտոս այն համոզումն ունի, թե՛ բյուրոկրատիկան ճարտարապետության հիմքը կկազմեն հայկական ճարտարապետությունը և այս առթիվ իր գործին պատրաստության համար պետք ունի հայկական հին ճարտարապետությունը ցուցանող շենքերու նկարներուն և հայ ճարտարապետության վրա խոսող հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով գործերու և հեղինակություններու։

Ես, որ Պոլսեն գալով երեք տարի է ի վեր հոս հաստատված եմ ու անարգել ու մոտ եմ Բաթրանի մեջ կառուցվող հունական եկեղեցիի մը շինությանը, իբրև ճարտարապետ ինձի դիմած է հայ ճարտարապետության վերաբերյալ նկարներ և ուսումնասիրություններ ունենալու համար և ես ինձմե սպասված այդ ծառայությունը կատարելու համար հոս չունեի ուրիշ միջոց, եթե ոչ օժանդակությանը դիմել Ձեր գերապատվության և խնդրել, որ բարեհաճեք ուղարկել ինձ հայ ճարտարապետության վերաբերյալ ալբոմներ. օրինակի համար Անիի եկեղեցիներու, պալատներու, Զվարթնոց եկեղեցիի և վերջապես հայ ճարտարապետության ոճը ներկայացնող շենքերու պատկերներ, ինչպես նաև հին հայ ճարտարապետության վրա հրատարակված հայերեն, ռուսերեն կամ այլ լեզուներով գրքեր ու տետրակներ։

Սրբազան հայր, Ձեր ղրկելիք նկարներու և գրքերու փոխարժեքը կհաճիք գիտցունել, որ անմիջապես ուղարկեմ. կամ եթե ասիկա անկարելի է, կհաճիք նախապես պայմանավորված նկարներու և գրքերու գինը իմացնել, որպեսզի փոխարժեքը փութացնեմ ու հետո ուղարկվեն անոնք։

Մ. Օրլանտոսի պատրաստելիք գրքին մեջ հայ ճարտարապետության վերաբերյալ մասը անգամ մըն ալ պանծացումը պիտի ըլլա հայ ստեղծագործ միտքին ու հանճարին և պատիվ մը հայ ցեղին համար, որուն վստահ եմ թի բերել պիտի հաճիք Ձեր բաժինը խնդրված օժանդակությունը չխնայելով։

Կանխավ հայտնելով խորին շնորհակալություն և համբուրելով Ձեր սուրբ աջը,

Կմնան խորին հարգանքներով
ժիրայր Նուխնիֆյան

Պղթ. 96, վավ. 1038

4

5 դեկտեմբերի, 1927
Երևան

Սրբազան հայր

Սրտի ցավով լսեցի Տեր-Գյուտի վաղաժամ վախճանվելու լուրը։ Սիրտս լցված է տխուր խոհերով մեր էջմիածնի ապագայի մասին, խոհեր, որոնք հույսով են ինձ և խլում ինձանից իմ հոգեկան հանգստությունը։

Հայտնում եմ Ձեզ և համայն միաբանության իմ առ ի սրտե ցավակցությունս ու խնդրում եմ այդպիսի զգացմունքներիս թարգման հանդիսանաք ամենքի առաջ ու հատկապես մեր ծիրանազարդ վեհափառի, որի աջը կարոտով համբուրում եմ։

Անվոդ ղոռները բերել տալու համար մենք կառավարության միջոցով հարուցանում ենք միջնորդություն։ Իրա համար հարկավոր է ապացույց տալ, որ ղոռը իսկապես բերված է Անիից։ Խոսքս Թեոդոսիայի թանգարանում գտնված դռան¹ մասին է։

Դուք, սրբազան հայր, այս տարի տեսել եք այդ ղոռը և կարդացել դրա արձանագրությունը։ Խնդրում եմ նեղություն հանձն առնեք հաղորդելու մեզ մի երկատողով ձեր դիտողությունները և հատկապես արձանագրությունը և թվականը։

Հնագետ Օրբելին² լենինգրադում ասել է մեր ներկայացուցչին, թե այդ ղոռը 15 դարու գործ է։

Հարգանք՝

Ն. Շահազիզ

Պղթ. 96, վավ. 1083

5

17 ապրիլի, 1929
<Թրիփսի>

Սիրելի Գարեգին՝

Նամակդ ստացա մեծ ուրախությամբ. երեկ պատմեցի Մելիքեմբեկյանին¹ քո ղեկուցման մասին գիտությանց ճեմարանում. երկուսս էլ շատ ուրախացանք և շնորհավորում ենք քո նվաճումները. աստված ավելի կարողություն տա։ Գրքում ես թե արդյոք ստացել եմ «Տաթև»² ամսաթերթի հինգերորդ գիրքը։ Ձէ, մինչև օրս ոչինչ ստացած չեմ. այլ կամենում եմ հիմնարկություններից տեղեկանալ գուցե մի տեղ ճարեմ կարդամ։

Այժմ ընկել եմ բաղ հոգսերով. կուպարոս պիտի ճարեմ, որի գինը էջմիածին շատ բարձր է. մասնավորի ձեռքին 30 ուրլի են ասում փութը, իսկ այստեղ ասում են 8 ուրլի. եթե ճարեմ շատ վաստակած կլինեմ, նրեկ թատրոնումն էի. Շարբաբջյանի դրաման էին բեմադրել՝ «Սայաթ-Նովա, խալիսի նոքար»³. շատ հիասթափվեցա, որ նկարիչ մարդ աշխատել է ճշմարտության դեմ ստել, որպեսզի միայն թե բեմադրվի. պատմական անճշտություն է իրեն թույլ տվել, թե Սայաթ-Նովեն սպանվելուս ասել է. փոխարեն ասելու՝ ես իմ հրիստոսս և եկեղեցիս չեմ ուրանա, ասում է՝ ես մեռնում եմ իմ ժողովրդիս համար։ Ինչ որ է. դա պիեսս էլ չի իսկապես, բայց և այնպես ասում են на безрыбье и рак рыба։ Ժողովուրդը հրճվում է։ Թերլեմեզյանը⁴ իր ցուցահանդեսը պիտի բանա։ Մոսկվայն⁵ նորան կենսաթոշակ է նշանակել. լսեցի շատ ուրախացա, որ իմացա, թե չէ խեղճը զովարությամբ էր Երևան ապրում։ Ես այժմ զբաղված եմ գրելով իմ հիշողություններս ուսերեն Պոլենովի⁶ մասին, իր կնոջ խնդրանքով։

25 երես գրել եմ, բայց պետք է հմուտ մարդու տամ սրբագրելու. սևագրությունը կպահանջեմ, մի օր քեզ կկարդամ: Շատ բարևում է ժուռնալիստ⁷ և ես. առողջ եղիր:

Մնամ քո նղիշե Թադևոսյան

Քղթ. 96, վավ. 1196

6

8 հունիսի, 1929
Երևան

Հայր Կարեղին, հարգելի բարեկամ

Իմացա, որ դուք վերադարձել եք ձեր ուղևորությունից և հիվանդացել թոքերի բորբոքումով, որից և հաջողությամբ բուժվել եք արդեն և կազդուրվելու համար ս. Խաչ¹ օդափոխության գնացել: Հույս ունիմ, որ այժմ արդեն բոլորովին կազդուրված կլինեք այդ վտանգավոր ախտից, որի շարորակ հատկությանն ես քաջ տեղյակ եմ մեր Հեղինեի² նույնպիսի և ավելի խստագույնից բռնված ու ապաքինված լինելու հանգամանքից:

Կարծում էի, որ դուք շուտով կվերադառնաք և սպասում էի ձեր գալստյան, բայց ինչպես երևում է, աշունքից առաջ այդ չի լինիլ: Ոչինչ, միայն լավ կազդուրվեք, հակառակ դեպքում հիվանդությունը կարող է վերստին կրկնվել, ինչպես եղավ մեր Հեղինեին:

Նոր միայն ուշի-ուշով կարդացի ձեր պիբեր³ և ցավեցա, որ շարունակությունը տակավին պիտի սպասենք: Ինչ խոսք, որ հարուստ է բովանդակությամբ ու նյութերի առատությամբ. դա կարող է լավ ուղեցույց լինել մեր պատմության «Ջաքարյան» կոչված շրջանի հայ մտավոր-կուլտուրական կյանքի մինչև օրս խճճված ու մութ մնացած կողմերի լուսաբանության համար, և այդ ոչ միայն հասարակ հետաքրքիր բնթերցողների համար, այլև մասնագիտորեն պարապողների:

Կրկնում եմ, որ պիտի ցավել, որ լրիվ չէ, երկրորդ մասը դեռ պիտի լինի, իսկ թե այդ լինելը երբ պիտի լինի, մեր կյանքի պայմաններում անհայտ է: Ծիծաղելի չհամարեք բառախաղը: Համենայն դեպս հրատարակվածն էլ արդեն մի կարևոր լուր է, որ դուք հղել եք հայ կուլտուրայի պատմության գանձա նակը:

Երբ երես առ երես պատահենք, իհարկե, այդ մասին եղկար կխոսենք: Ինչ հատկապես ներկայումս շահագրգռում է վաշուտյան տոհմի պատմությունը, որի մասին դուք միայն հարևանցի եք խոսում ձեր արժեքավոր աշխատանքում: Ես, դուք գիտեք, որ տարիներ առաջ գրել էի Աշուտարակի պատմությունը և ուղարկել Վիեննա, գիտեք նույնպես, որ այդ գրվածքը տեղ չէր հասել ու ճանապարհին կորստյան մատնվել: Այս ամիս ես վերստին գրեցի այդ «Հնագիտական ու պատմական տեսությունը», բայց ավելի ընդարձակ ու ավելի մանրամասնաբար: Օգտվել եմ ձեր ինձ տված արձանագրություններից, բայց իմ ձեռքին եղածները պակասավոր են: Դուք անկասկած բոլորն ունիք, և ես կուզենայի բոլորն էլ օգտագործել, համեմատելով դրանց ընդօրինակումները իմի ու ուրիշների բնթերցվածների հետ, որպեսզի դրանք մտած լինեն իմ գրվածքի մեջ արդեն բոլորովին դրված ու ճշտված:

Աշուտարակի արձանագրություններից չի երևում, թե դա ո՞ր իշխանական տոհմի կազմածքի մեջ է եղել՝ դրացի գյուղերի նման վաշուտիանների, թե՛ մի ուրիշ տոհմի: Արձանագրության մեջ հիշվում են Աղբուղան և իր ամուսին Սիթի խաթունը, Արջուկ իշխանը ու իր ամուսին «տիկնանց տիկինը», Ասնավորը ու Ղուտալաբը և Սաղուն իշխանը:

Աղբուղան հայտնի է, բայց թե ո՞վ է Արջուկ իշխանը, որի ամուսինը իրեն կոչում է «տիկնանց տիկին», ո՞չք են Ասնավորը և Ղուտալաբը, հայտնի չեն: Մենք կարծում ենք, որ Սաղունը հայտնի Սաղուն Արծրունի իշխանն է, «պա-

րոն հուլիսի 19-ի» հայրը, որ, ինչպես դուք գրել եք, վախճանվել է 1282 թրվին:

Այստեղ, ի միջի այլոց, ես պիտի հաղորդեմ ձեզ, որ թանգարանս այժմ ունի պարոն հուլիսի 19-ի շատ բնափայտ արտահանությունը, որ կատարել է մեր պատվերով հայտնի նատալիա Օռամազիվսկայան շաղբատի որմնանկարից:

Ահա այս բոլորը և սրանց նման ուրիշ բաներ կարող են պարզարանություն, որի համար հարկավոր է ինձ ձեր աջակցությունը:

Ձգիտեմ, թե դուք երբ մտադիր վերադառնալ ս. էջմիածին: Եթե դուք օգոստոսին այդտեղ լինեք, մենք կարող ենք տեսնվել, որովհետև միտք ունիմ շեղինների բերել եղբոր մոտ Նախիջևան¹:

Բարևներս մեր բոլոր բարեկամներին և նամանավանդ մերայնոց, որոնց հետ հավանորեն հաճախ տեսնվում կլինեք:

Բարեկամական ողջույններով ձեր Լ. Շահագիր

ժողթ. 96, վավ. 1212

7

4 հուլիսի, 1929

Վիեննա

Արևիկապատիվ

Տ. Գարեգին Արևիկապատիվ Հովսեփյան

Սիրելի սրբազան.

Ձեր 15 ապրիլ շնորհալի գիրն կարգացի ամենամեծ հետաքրքրությամբ: Շատ շատ ուրախացա, որ Ձեր անխնայ ջանասիրությամբ ձեռք բերած գիտական աղբյուրներն արժանացած են մասնագետներու գնահատությանը, ինչպես արժանի էին անպայման: Ձեր դասախոսության մասին խոստացված գեկուցումը չհասավ «Հանդեսի» խմբագրությանը, որ պատրաստ է սիրով հրատարակելու յուր էջերու մեջ:

Հաճեցեք պատվել մեր ուսումնաթերթը Ձեր մասնագիտական և թանկագին աշխատակցությամբ: Մասնավորապես պիտի խնդրեի, որ վերջապես ձեր բերեք Հայ գրչության պատմությունը և հանձնելիք դայն «Հանդեսի» խմբագրությանը ի հրատարակություն:

Որոգիների երգոց երգոցն մեկնության մեր Մատենադարանի 2 նորագույն ձեռագիրները բաղդատությամբ և ֆրանսերեն թարգմանությամբ պատրաստած ենք հրատարակության: Բայց ինձ ցանկալի էր, որ բնագիր առնվեր Ձեր կազմած օրինակը՝ հնագույն ձեռագիրներու վրա հիմնված: Եթե ունիք դիտարկություն ուղարկելու դայն, պիտի խնդրվի: Այս առթիվ պիտի հիշեցնեմ նաև Ստեփ. Սյունեցվո և Հիպպոլիտի գրվածոց հավաքածուքը, զոր կատարած էիք և տրամադիր ցուցուցած էիք Ձիզ¹ տալու զանոնք մեզ ի հրատարակության: Եթե անոնք լինեն մեր տրամադրության տակ, կհոգանք կամաց-կամաց անոնց թարգմանությունը (լատիներեն կամ ֆրանսերեն), որպեսզի հարմար առթիվ ապագաներ:

Ներկայիս զբաղված եմ Գրիգորիս Աղվամարցվո տաղերի հրատարակությամբ (որ 1914-ին 10 թերթ տպագրված և ապա ընդհատած էր): Բ. մասին մեջ երկար զբաղված եմ Գրիգորիսի կենսագրությամբ և հավաքած ի մի այն ամեն տեղեկություններ, որոնք կհային Գրիգորիսի: Նկատի առած եմ նաև Ձեր գրվածքը² («Արարատ», 1919): Դժբախտաբար դեռ չեն հասած ինձ իմ նյութերս՝ հավաքված Երևան և էջմիածին³: Անոնց մեջ կային մի քանի հիշատակարան-հիշատակագրություններ Գրիգորիսի վերաբերյալ, զորոնք օգտագործել կարող էի այս առթիվ:

Ձեռքիս տակ ունիմ նաև ուսումնասիրություն մը Ղևոնդ երեց պատմադրի մասին⁴, եկած եմ այն համոզմունքի, թե Ղևոնդ է հեղինակը նաև Մ. հորենացվո անվամբ ծանոթ «Հայոց պատմությունը»: Այս համոզմունքս զրդեց դիս մի-

չամուխ լինելու նաև Մ. Խորենացվո խնդրոյն մեջ: Երկար ժամանակ պիտի խլե այս ինձմէն:

«Խաղրակյանք» Ա. հասալ խմբագրութեանը Շնորհակալութիւն: Գնահատական մը նվիրեցի «Հանդեսի» մայիս-հունիս միատեղ համարներու մեջ, որմէ օրինակ մը ուղարկեցի Ձեզ: Չգիտեմ հաճո պիտի անցնեն տողերս՝ Սրբադանիդ: Հիշողութեամբ գրցված էջ մը պիտի գտնեք «Տաթև» տարեցույցի մեջ⁴: Իմ սիրեցյալ Սրբադանս չի հիվան<դ>ոտ հիշողութեամբ:

Ե՞րբ պիտի ունենանք առիթ մյուս անգամ տեսութեան, կսպասեմ Սրբադանիդ այս միջավայրի մեջ: Հաճեցեք պատվել մեր Ս. Հարկը:

Այս տարի խոստացած են տալ մեզ իրենց այցելութիւնները Թորգոմ և Բարկեն սրբադանները:

Մոտերս լույս տեսաւ F. Macler-ի «L'enluminure arménienne profane, Paris, P. Yentner, 1928.4. Prix. 300 frs. Այստեղ ներկայացված են լուսատիպ պատկերներով Աղեքսանդրի վարքի նկարները Վենետիկի թ. 424 ձեռագրեն ից. 1—81. Երկու հատակոտոր Վիեննայի թ. 442-են (ից. 82—83). Գրիգոր Ահարոնյանի հին հավաքածոյեն ից. 84—88 (=Գր. Աղթամարցվո). Վիեննայի թ. 319-են ից. 89—190. Պարիսի թ. 291-են ից. 191—309:

Վենետիկի Ս. Մարկոսի գրադարանեն (1 անընթ.) պատմութեան ից. 310—377: Մակկեր տված է այստեղ ձեռագիրներու բոլոր նկարները. սկիզբը համառոտ բացատրութիւն մը ձեռագրաց մասին: Ի՞նչ պիտի ըսէ աշխարհը, երբ լույս տեսնեն Ձեր հավաքածոյքները: Աճապարելու է:

Միշտ սիրով և հավաստիոր հարգանաց

Հ. Ն. Ակիւնյան

Թղթ, 96, վապ. 1217

8

7 հունվարի, 1930

Վիեննա

Արհիպատիվ
Տ. Գաբեգին Արքեպիսկոպոս
Սիրելի սրբազան.

Ձեր 27 նոյեմբ <երի> թվակիր շնորհալին կարգացի մեծ հաճութով: «Հանդեսի» խմբագրութեան գործերն արգելք եղան ինձ ավելի շուտ պատասխանելու:

Գրիգորիս Աղթամարցվո նվիրված Ձեր աշխատութիւնը սիրով պիտի հյուրընկալիմ «Հանդեսիս» մեջ¹. Եթէ ընկերացնէք մի քանի նմուշ անոր գրչութեան և նկարչութեան արվեստեն, ավելի ուրախ պիտի ըլլայի: Իմ աշխատութիւնս լրացուցած էի Ձեր նախկին հոգվածի հիման վրա և կսպասեմ հարմար առիթի հանձնելու տպարան: Թեև մի 8 թերթ տպագրված էր արդեն 1914-ին, բայց մտադիր եմ ամբողջն նոր խմբագրութեամբ մյուս անգամ տպել ավելի շքեղ թղթի վրա և ավելի պատշաճ ձևով. գեղարվեստական հանդերձավորութեամբ: Կնկատեմ, որ ներկա աշխարհս առանձին հետաքրքրութիւն կտածն դեպի միջնադարյան տաղեր:

Կսպասեմ Որոգինեսի երկերու հայ մնացորդներու: Անշուշտ ավելի ցանկալի պիտի ըլլար մեզի այս ձևով հրատարակութիւնը. ալիւնքն կատարելութեամբ և ավելի կատարելութեամբ: Հաճեցեք ուղարկել նաև Հիպպոլիտիո մնացորդքը: Ասոնք նույն շարքի մեջ առանձին հատորներով լույս պիտի տեսնին: Կարգը պիտի դա նաև Ստեփ. Իմաստասերի երկասիրութեան:

«Հանդեսի» համար աշխատեցեք հասցնել շատ հոգվածներ. ըստ հարմարութեան կարող ենք նաև արտատպել: Յուրաքանչյուր հոգված ունենա ի կատարածին ամփոփում մը սակավ տողերու մեջ, որպէսզի կարենանք վերածել եվրոպական լեզվի մը՝ նյութը նաև օտարաշուրթն գիտնականներուն մատչելի:

դարձնելու նպատակով: Այս ուղղությունը պիտի հետևի «Հանդեսը» սկսյալ ընթացիկ տարիներ:

Կարողացի «Տաթև» տարեգրքին մեջ «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից»². շատ ափսոս, որ նկարներն տպագրված են շատ անհաջող: Նույն տարեգրքին մեջ ունեմ նաև ես հուշեր իմ սիրելի Սրբազանիս մասին³. չդիտեմ կարողացի՞ք արդեն: Եթե անճշտություններ նկատեք, պիտի խնդրեմ, որ ներողամիտ լինեք. ես կատարների պարտք մը. աշխարհի առջև դրի անտիպ գործեր, որոնց հրատարակության մասին պետք է խորհի առգր, և հատկապես իմացող հասարակությունը: Իցի՜վ ստեղծվեին միջոցներ, լույս հանելու թաքուն դանձերդ:

Պրոֆ. Ստրիգովսկիի⁴ հետ տեսնվեցա. հանձնեցի նամակդ և գրքերդ: Մեր տեսակցության ժամանակը շատ կարճ էր. բայց և այնպես հայտնեցի մտքեր: Ձեր ուսումնասիրությանց տեսակի և ընթացքի մասին: Ինքը սգավոր էր. որդին սինձասպան եղած էր վերջին ամիսներս:

Մատենախոսականս կներփակիմ:

Առթիվ Ամանորու տոնից ընդունեցեք, սիրելի Սրբազան, ջերմ բարեմաղթություններս. Ձեր սուրբ փափագներուն կատարյալ զոհացում կմաղթիմ: Ձեր ուժերուն անսասան առողջություն և տոկունություն:

Իմ գրվածքներս չեն հասած ինձ. բայց կան աշխատանքներ ձեռքիս տակ. հորենացի և Ղևոնդ Երեց նույնացուցի. «Հայոց պատմության» գրության ժամանակը նշանակեցի 790—810: Ես համոզված եմ, բայց չգիտեմ այլոց դատաստանը:

Սիրո և մեծարանաց հավաստիքներով իմ

Հ. Ն. Ակինյան

Թղթ. 96, վավ. 1237

9

12 հունվարի, 1930

Երևան

Հարգելի

սրբազան.

Շնորհակալ եմ ձեր ցուցմունքի համար. կաշխատեմ օգտվիլ Գաղարիներ¹ ունի Երևանին վերաբերյալ և ուրիշ գեղարվեստական նկարներ: Դրանց հալածքածուն գտնվում է Ռուսական թանգարանում, ու մենք աշխատում ենք ձեռք բերել բոլոր «Երևանի թանգարանի» համար, որ քաղաքիս դրամական օժանդակությամբ այժմ կազմակերպվում է թանգարանիս² կից: Եթե չհաջող<վ>ի իսկականները ստանալ, կաշխատենք լուսահանել տալ մեզ համար:

Ինչ խոսք, որ գրակալի ուղարկելու բոլոր ճանապարհածախքը պետք է հոգա թանգարանը: Ես խնդրում եմ, որ դուք պատվիրեք, որ խնամքով հակառակորեն ու այնպես վերագիր վճարով ուղարկեք. մենք այստեղ կհատուցանենք ու կստանանք: Գուցե հնարավոր համարեք ուղարկել հայր Բեկլարյանի որդի Սմբատի ձեռքով, որ այս օրերս այդտեղ կլինի ու շուտով էլ կվերադառնա:

Իմ «Երևանը»³ ես արդեն հանձնել եմ Համալսարանի վարչության<ը>, որ տպագրեն «Մեքենայան» կտակի միջոցներով: Այդ մասին կազմակերպված հանձնաժողովը արդեն ընդունել է, ու այժմ, որքան ես իմացել եմ, հանձնված է կուսակցական դասախոսներից մեկին քննելու քաղաքական տեսակետից, թեև դժվար թե մի հակառակ բան գտնվի նրա մեջ:

Գիտական ինստիտուտի տեղ<եկ>ագրի 4-րդ գիրքը դեռ չի դուրս եկել թղթի պակասության պատճառով: Երբ դուրս գա, իսկույն կուղարկեմ ձեզ: Չորս տպագրական թերթ արդեն տպագրված է և կանգ է առել:

Ներկայումս բացված է թանգարանիս կազմակերպած ցուցահանդեսը նախադրանքների նրա ծննդյան 100-ամյակի առթիվ: Խորեն եպիսկոպոսը քաղաք է եկել գործերի համար, բայց հիվանդուցել մնացել է այստեղ: Պետք է գնայի

տեսություն, բայց ասացին, թե 39 աստիճան ստորություն ունի, ուստի անհարմար համարեցի:

Ամենքից շատ ու շատ բարենկեր ձեզ: Շտապում եմ վերջացնել նամակս, որովհետև Սմբատը նստած սպասում է:

Հարգանք՝ և Շահագիլ

Քղթ. 96, վազ. 1241¹

10

16 ապրիլի, 1937

Վիեննա

Սիրելի սրբազան.

Ստացա Որոգիների մեկնության երկուց երեցոց. քանի մը օր հետո նաև Ձեր պատասխանը: Շնորհակալություն թե միույն և թե մյուսին համար:

Անշուշտ շատ ցանկալի էր մեզ, եթե Սրբազանդ հաճեր նվիրել հոգված մը Որոգիների գործերու հայերեն թարգմանության մասին: Կարող ենք դայն հրատարակել «Հանդեսի» մեջ և օգտագործել նաև հայերեն-ֆրանսերեն հրատարակության նախաբանին մեջ:

Լենինգրադ գտած Ձեր հաջողումները ուրախացրին զիս մեծապես: Որչափ պիտի բաղձայի, որ իրագործվեին այն խոստումները, որոնք եղած են Ձեզ այնտեղ: Բայց Սրբազան, ճարտարվեստի-շինարվեստի հետամուտ եղած՝ շմոռնաք մանրանկարչությունը: Այս է ամենեն կարևորը. դայն պարտ է առնել և դայսու ոչ անցանել: Վերջացուցեք մանրանկարչության պատմությունը, լույս հանեցեք դայն և ապա պարապեցեք շինարվեստով: Եթե Ձեր նյութերն առած գաք այս կողմերը, պիտի գտնեք—ինչպես վստահ եմ—ամեն հաջողություն: Strzygowski¹ հետամուտ է այժմ լուր կյանքի վերջին գործերն էլ հալ մանրանկարչության պատմությունը: Բայց—իհարկե—ոչինչ չէ կարող ընել, որովհետև ունի ձեռքի տակ և ոչինչ: Խորհուրդ պիտի շտայի Ձեզ ներկայացնել Ձեր նյութերն անոր, որովհետև շատ կվախնամ, որ նույն խաղն և Ձեզ հետ խաղա, ինչ որ ըրավ Քորամանյանին²: Գուցա զինքը չափազանց ինքնասեր: Պետք զգաց իմ օգնությունը, բայց ես բնավ հոժար չեմ իր փառասիրության ստրուկ դառնալ—Գուցա եկեք մի անգամ այս կողմերը. կգտնեք ամեն աջակցություն ուրիշ կողմանե: Պետք է աճապարել, որովհետև մեծ է շահագրգռությունը:

Փոքրիկ ուսումնասիրություն մը նվիրեցի ես Լեմբերգի³ 1197/8 թվի Ավետարանին⁴, զրված ի Մլիճ—Սկեռա, Գրիգոր գրիչ-նկարչի ձեռքը: Մանրանկարներն 11 նկար հրատարակեցի: Դժբախտաբար հնար չեղավ ինձ ձեռագիրն տեսնել անձամբ: Ուսումնասիրության Ա մասն լույս տեսած էր «Հանգ<ես> ամս<օրյայի>» մեջ (թ. 1—2), ուր հրատարակված էր նաև ձեր հոգվածն Աղթամարցվո մասին⁵: Այս միատեղ համարն ապահովագրությամբ ծրարով ուղարկված էր Ձեզ. դարմանալի է, որ չեք ստացած:

Ընդ գրույս կուղարկեմ Ձեզ «Տաթևի» մեջ լույս տեսած հուշերս⁶, հանելով իմ անձնական օրինակեն: Պիտի խնդրեի, որ ներողամիտ գտնվեր Սրբազանդ, եթե տողերս վիրավորեն Ձեր համեստությունը:

Ես սիրով պիտի ուզեի ուղարկել Ձեզ «Հանդեսի» ուրիշ օրինակ մըն ալ. Եթե գիտնայի, որ պիտի հասնի Ձեր ձեռքը: Պիտի փափագեի մասնավորապես լսել Ձեր կարծիքը Սկեռայի Ավետարանի վրա գրած տողերուս մասին: Իհարկե, ես մի սիրող եմ, և ոչ մասնագետ: Երբ հայտնեցի Strzygowski-ին⁷, որ պիտի գրեմ այս նյութի մասին—տարօրինակ կերպով հարցուց, թե ինչու, ինչ առթիվ ես այս նյութին կմերձենամ, փոխանակ լուր խորհուրդներով ինձ քաջալեր ըլլալու: Ոչինչ, եթե ինչ-ինչ կետերու մեջ սխալած ըլլամ: Մտադիր եմ առաջիկա թվերին միույն մեջ գրել հայ մանրանկարչության առաջին շրջանի վրա (ե—ԻԱ դար), ընդհանուր տեսությամբ, հիմառնելով մեր ձեռագրատան մեկ-երկու նկարներ: Ասպարեկը Սրբազանիդ է. դուք միայն Ձեր հարուստ անսպառ նյութերով ազատ խոսք ունիք ըսելու: Ըսեմ առթիվս, որ Լեմբերգ—Սկեռայի Ավետարանը Գրիգոր Արկուռեցվո Ավետարանին տիպեն է, հավանորեն անոր

արտագրությունը, իսկ գրիչն ունի ներսես Լամբր<ոնացու> նարեկին գրչին հետ նույն: Ափսոս, որ շունեի աչքի առաջ ոչ մին և ոչ մյուսը: Հիշողությունը չի կրնար նպաստել այսպիսի ուսումնասիրության ժամանակ:

Հնդունեցեր, սիրելի Սրբաղան, սիրուս և հարգանացս հավաստիքները, որովք իմ Սրբաղանիդ

Հ. Ն. Ակինյան

Ներքիակ՝ «Տաթևի» հոդվածն:

Թղթ. 96, վավ. 1257

11

13 հուլիսի, 1930

Տիֆլիս

Անճառարգո սրբազան.

Պր. Հ. Անճառլանից տեղեկացա, որ «Թավրիդի ձեռագրացուցակի» № 32-ի ներքո նրա արձանագրած ՄՍ. մոտ ժամանակներս Ձեր ձեռքի տակ է եղել: Անչափ ուրախանալով, որ Սայաթ-Նովայի հարցի համար էական նշանակություն ունեցող այդ ձեռագիրը¹ այլևս անմատչելի չէ (քանի որ ես այն Թավրիդումն էի կարծում), գուցե և կորստից էլ աղատված է և քանի որ իմ աշխատությունն այդ հարցի վերաբերյալ, որ ես անցյալ տարի նախ վրացերեն ղեկուցեցի Տրփ-դիսում 11—12. X-ին, ապա հայերեն ներկանում² (գիտ. և արվեստի ինստիտուտում) ? XII-ին, արդեն տպագրվում է և մոտ օրերս լույս է տեսնելու (առաջին հերթին՝ վրացերենը, Վրաստանի Պետհրատի հրատարակությամբ)³, դիմում եմ Ձեզ խնդրանք՝ չվանաք հաղորդելու ինձ հետևյալ տեղեկությունները.

ա. ո՞ր №-ի ներքո է այդ ՄՍ. այժմ ցուցակագրած էջմիածնի մատենադարանի հավաքածուի մեջ, և

բ. ո՞վ, ե՞րբ և ի՞նչ հանգամանքներումն է այն Պարսկաստանից էջմիածին տեղափոխել:

Եթե նկղություն պատճառած չէի լինի, կխնդրեի նաև ՄՍ. 37 Բ, 106Բ, 170Բ և 277ա էջերում դանկող հիշատակարանները (միաժամանակ դուցե և սկզբնական երևույթ) լուսանկարելով՝ հասցենք ինձ (ամբողջ ծախքը, պարզ է, ես կհոգամ):

Անհանգստություն պատճառելու համար նախօրոք խնդրում եմ ներողամիտ լինեք:

Հարգանք՝ Լ. Մելիքսեբեկ

Հասցես. Тифлис. Московская 3, Л. М. Меликсет-Беку.

Թղթ. 96, վավ. 1271

12

8 հոկտեմբերի, 1932

<Թբիլիսի>

Սիրելի Գարեգին!

Այսօր նամակդ ուրախությամբ ստացա. ուրախ եմ, որ առողջ ես. կհուսամ և զբաղված ես: Երեկաշիր, որ եթե ինձ կանչեր էլ (ինչպես պայմանավորվել էինք) չպիտի կարողանալի գալ Դսեղ, քանի որ սկսել էի նկարել Երևանից մի պատվեր. այն է Տեր-Գաբրիելյանի¹ պորտրետը, որը երկու օր է, որ վերջացրել եմ: Նա էլ շատ զբաղված էր, այնպես որ չպիտի կարողանալի ընդհատել գործը. մյուս կողմից այնպիսի մի դժվարություն է տեղից շարժվել, որ ավելի լավ է տեղում մարդ պինդ նստի, այլապես շատ նեղություններ պիտի ստիպված լինի քաշել: Այժմ պարապելու եմ նույն պատկերը կրկնել, որ դարնանը, հավանական է, որ ՎՈՅ հաստատությունը ուղարկի արտասահման ցուցահանդեսին, ի

թիվս այլ պատկերների Հայաստանի նկարիչների: Ուրախ եմ, որ առիթ եղավ ծանոթանալ Ս. Տեր-Գաբրիելյանի հետ: Ինչպես տեսնում ես անգործ չեմ, դրադմունք ունեմ միշտ: Ես մտադիր եմ գալ մի շաբաթ ժամանակով Երևան, թե մուղեում պատկերս վերջացնելու նպատակով և թե մի օրով գնալ Սեան նրկարելու, բայց երբ դա ինձ պիտի հաջողվի, դա որոշել ժամանակը չեմ կարող: Իհարկե կցանկամ որչափ կարելի կլինի շուտ շուտ վերջացնեմ այստեղի սկսած գործերս, որ աղատ կարողանայի գալ, քեզ հետ էլ տեսնվել:

Դրամբյանը² մտադիր է գրել իմ արվեստի մասին, որին տվեցի իբրև նյութ քո գրվածը իմ մասին «Տաթև» թերթում³, բայց նա ինձանից ափելի տեղեկություններ է խնդրում, որը մտադիր է սպել Մոսկվայում. զորա համար պետք է իրեն հետ տեսնվեմ նորից: Ընդունիր իմ և ժուստինի⁴ կողմից կարտով բարեններ:

Մնամ քո նղիշն Թաղևոսյան

Դպր. 96, վավ. 1371

Ս Ա Ն Ո Ւ Թ Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1

1. Խոսքը, ամենայն հավանականությամբ, էջմիածնի կուլտուր-պատմական՝ գիտական ինստիտուտի մասին է, որը կազմակերպվել էր Հայաստանի հեղկոմի 1921 թ. փետրվարի 5-ի ղեկիտի հիման վրա:

2. Նկատի ունի հնագետ, պատմաբան Աշխարհբեկ Քալանթարին (1887—1938):

3. Ալեքսանդր Թամանյանը (1878—1936) Սովետական Հայաստան է հրավիրվել 1923 թ. ապրիլին:

2

1. Յոհաննես Լեփսիուս (1858—1926)—գերմանացի հոգևորական, հասարակական գործիչ, արեւելագետ, երկար տարիներ զբաղվել է Հայկական հարցով: Գրել է «Հայաստանը և Եվրոպան» (1896), «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում» (1916) ուսումնասիրությունները, կազմել և հրատարակել է «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թթ.» (1919) փաստաթղթերի ժողովածուն, 1914—1926 թթ. եղել է իր հիմնադրած «Գերմանա-հայկական բնկերություն» նախագահը:

4

1. Թեոդոսիայի քաղաքային թանգարանում պահվում են Անիից բերված, ինչպես և տեղում հայ վարպետների ձեռքով նախշազարդված ղոներ. ալդ մասին տես Թ ո Ր Ո Ս Թ ո Ր Ո Մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 368, Ա. Ս. Մ ն ա-ց կ ա ն յ ա ն, Անմոռաց հուշարձաններ («Գրական թերթ», 15. XI. 1968), Հ ա մ թ ի կ Հ ա-ր ու թ յ ու ն յ ա ն, 600-ամյա քանդակազարդ մի դուռ («Սովետական արվեստ», 1968, № 11, էջ 55—56):

2. Նկատի ունի Հովսեփ Օրբելուն (1887—1961):

5

1. Խոսքը պատմաբան, բանասեր, մատենագետ, հնագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի (1890—1963) մասին է:

2. «Տաթև»—կրոնական տարեցույց, գրական, բանասիրական, գեղարվեստական, Կ. Պոլիս—Հալեպ, 1925—1930, խմբագիր՝ Արտավազդ վրդ. Սյուրմեյան:

3. Նկատի ունի բեմանկարիչ Գրիգոր Շարբաբչյանի (1884—1942) «Սայաթ-Նովա—խալիսի նոքար» 4 գործողությամբ և 7 պատկերով պիեսը (ռեժ. Ա. Բուրջալյան, Նկ. Վ. Իվանով և Գ. Շարբաբչյան, երաժշտ. Ս. Փանյան և Ս. Օգաննիզադիլի, Սայաթ-Նովայի դերում՝ Դ. Մալյան):

նիրկայացումը բեմադրվել է մի շարք անգամ՝ գրական-գեղարվեստական շրջաններում և մամուլում առաջ բերելով բավական սուր վիճաբանություններ:

4. Խոսքը Փանոս Թերլեմեզյանի (1865—1941) մասին է:

5. Նկատի ունի լուսժողովում և ՀՄՍՀ Ժողովխորհրդի նախագահի տեղակալ Ասքանազ Մուսվ-յանին (1885/1886—1929):

6. Խոսքը ուսն նշանավոր գեղանկարիչ Վ. Դ. Պոլենովի (1844—1927) մասին է: Ե. Թադև-իոսյանը (1870—1936) նրան աշակերտել է Մոսկվայի գեղանկարչության ուսումնարանում: Հե-տագայում նրանք դարձել են մտերիմներ:

7. Ժյուստին Ռոմանի նեֆը Ե. Թադևոսյանի կինն էր:

6

1. Խոսքը նոր նախիջևանի (այժմ՝ Դոնի Ռոստովի Պրոլետարական շրջան) Ս. Խաչ վանքի մասին է: Գ. Հովսեփյանը այդ ժամանակ (1927—1933) Ղրիմի և նոր նախիջևանի հայոց թե-մերի առաջնորդն էր:

2. Նկատի ունի կնոջը՝ Հեղինե Սայթիկյանին:

3. Խոսքը Գ. Հովսեփյանի «Խաղաղական կամ Պոռչյանը հայոց պատմության մեջ. պատ-մա-նագիտական ուսումնասիրություն» (Վաղարշապատ, 1928) գրքի մասին է:

4. Նկատի ունի նոր նախիջևանը:

7

1. Խոսքը Գ. Հովսեփյանի «Գրիգորիս Աղթամարցի (գրական-կենսագրական նոր նյութերով)» հոդվածի («Արարատ», 1919, հունվար-դեկտեմբեր, էջ 3—40) մասին է:

2. Ներսես Ակինյանը (1883—1963) 1924 թ. հոկտեմբերի սկզբին եկել էր Հայաստան՝ նը-ղատակ ունենալով ուսումնասիրել Երևանում և էջմիածնում պահվող հայերեն ձեռագրերը և հա-վարել նյութեր հայ մատենագրության պատմության համար: Վիեննա է վերադարձել 1929 թ. փետրվարի վերջին [Ն. Ակինյանի այս ուղևորության մասին տես Հ. Ն. Ակինյան, Համառոտ տեղեկագիր գիտական ուղևորությանս ի Հայս («Հանդես ամսօրյա», 1929, № 4, էջ 193—208)]:

3. Նկատի ունի «Ղևոնդ Երեց սլաոմագիր. մատենագրական-պատմական ուսումնասիրու-թյուն մը» հոդվածը (շարունակաբար տպագրվել է՝ «Հանդես ամսօրյա», 1929, № 6—7, էջ 330—348, № 8—9, էջ 458—472, № 10—11, էջ 593—619, № 12, էջ 705—718):

4. Խոսքը «Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան (հուշեր)» վերնագրով հոդվածի մասին է («Տաթև», 2 տարի, 1930, էջ 374—382):

8

1. Գ. Հովսեփյանի այս հոդվածը՝ «Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին» վերնագրով տպագրվել է «Հանդես ամսօրյայի» 1930 թ. № 1—2-ում (էջ 41—60):

2. Այս ուսումնասիրությունը տե՛ս «Տաթև», 2 տարի, 1930, էջ 194—248:

3. Տե՛ս նամակ 7-ի 4-րդ ծանոթ.:

4. Յոդեֆ Ստրմիզովսկի (1862—1941)—ավստրիացի արվեստագետ, Վիեննայի արվեստի պատմության ինստիտուտի պրոֆեսոր: 1889 և 1913 թվականներին Լեդել է Հայաստանում: Հե-ղինակ է հայ պատմական գեղարվեստի վերաբերյալ գրքերի:

9

1. Գ. Գ. Գաղարին (1810—1893)—ուսն նկարիչ, 1848—1854 թթ. ապրել է Թիֆլիսում. հա-վասարա, այդ ընթացքում էլ եղել է Երևանում և ստեղծել մի շարք նկարներ: Երևան քաղաքի պատմության թանգարանի կերպարվեստի ֆոնդում պահվում են Գ. Գաղարինի «Դերվիշները ա-ղթելիս» (№ 645), «Քարվանսարայի մուտքը» (№ 738), «Սարգարի հայելազարդ դահլիճը» (№ 969, 2559), «Սարգարը որսի ժամանակ» (№ 970) նկարները: Ե. Շահազիզին (1856—1951) ուղղած անթվակիր մի գրության մեջ Գ. Հովսեփյանը «Սարգարի հայելազարդ դահլիճը» նկարի մասին հաղորդում է.

«Հարգելի բարեկամ Ե. Շահազիզ.

Պարտք եմ համարում Ձեզ հայտնել, որ Երևանի սարգարի պալատի հայելիներով զարդա-րած դահլիճի հաջող պատկերը տպված է Գ. Գ. Гагарин-ի կողմից, 1859 թ. Русский художеств.

листок-ի № 27-ի մեջ. Литография Тима» (Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 96, վավ. 1241 II)։

2. Նկատի ունի Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանը։ Ե. Շահագիր 1922—1930 թթ. էղել է այդ թանգարանի պատմագրական բաժնի վարիչը։

3. Խոսքը «Հին Երևան» (Երևան, 1931) գրքի մասին է։

10

1. Տե՛ս նամակ 8-ի 4-րդ ծանոթ.։

2. Նկատի ունի այն իրողությունը, որ Յո. Ստրժիգովսկին Թ. Թորամանյանի գիտական նյութերի հիման վրա 1918 թ. գերմաներեն հրատարակել է «Հայկական ճարտարապետությունը և նվիրական նրկհատոր ուսումնասիրությունը, հիշատակելով, որ գծագրական նյութերի հեղինակը Թ. Թորամանյանն է։

3. Ամբերգր լվով քաղաքի գերմանական անվանումն է։

4. Նկատի ունի «Սկեռայի ավետարանը 1197 թվականին լվովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մեջ (նսյատ մր հայ մանրանկարչության պատմության)» հոդվածը («Հանդես ամսօրյա», 1930, № 1—2, էջ 95—112, № 3—4, էջ 210—236)։

5. Տե՛ս նամակ 8-ի 1-ին ծանոթ.։

6. Տե՛ս նամակ 7-ի 4-րդ ծանոթ.։

7. Տե՛ս նամակ 8-ի 4-րդ ծանոթ.։

11

1. Նկատի ունի այժմ Մատենադարանում պահվող № 4270 ձեռագիրը (1766 թ.)։

2. Նկատի ունի Գիտություն և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնում կարդացած «Ո՞վ էր Սայաթ-Նովան» գեկուցումը։

3. Խոսքը «Սայաթ-Նովան» (Թբիլիսի, 1930) աշխատության մասին է։

12

1. Նկատի ունի Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին (1886—1937)։ Հայաստանի հեղափոխության պետական թանգարանում (Ս. Տեր-Գաբրիելյանի ֆ., № 25117) պահվում է կտավի (յուղ., 88x62) հեղինակային կրկնօրինակը՝ կատարված 1933 թ. Թբիլիսիում։

2. Խոսքը արվեստարան Խուրեն Դրամբյանի (ծնվ. 1891) մասին է։

3. Նկատի ունի Գ. Հովսեփյանի «Նկարիչ Եղիշե Թադևոսյան» վերնագրով հոդվածը (տե՛ս «Տոթեք», Ե տարի, 1929, էջ 284—297)։

4. Տե՛ս նամակ 5-ի 7-րդ ծանոթ.։